# ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը ազդարարում են նոր հնագիտական հանդեսի ծնունդը: Այն գրախոսվող պարբերական է, որի նպատակն է շրջանառել Հայաստանի և տարածաշրջանի երկրների հնագիտությանը վերաբերող բարձրորակ հնագիտական աշխատանքներ (հաշվետվություններ, հետազոտություններ, տեսական-մեթոդաբանական հոդվածներ): Թեմատիկ, ժամանակագրական, էջաքանակային և նկարային սահմանափակումներ չկան:

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են հոդվածներ նաև ռուսերեն և եվրոպական լեզուներով: Հոդվածները պետք է ունենան հստակ կառուցվածք՝ նախաբան, բուն տեքստ (հնարավորինս շատ ենթավերնագրերով), եզրակացություն, ռեզյումե (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն, այլ լեզվի դեպքում՝ հայերեն, մոտ 300 բառ):

Չափանիշներն են՝

1) Տառատեսակը՝ Arial Unicode:
2) Գծանկարները, սև-սպիտակ կամ գունավոր լուսանկարները ներկայացնել տեքստում որպես հաջորդական նկարներ (Նկ. 1, 2, 3…):
3) Գծանկարների և սև-սպիտակ լուսանկարների խտությունը պետք է լինի ոչ պակաս քան՝ 600, գունավոր նկարներինը՝ 300 dpi:
4) Հղումը՝ տեքստի մեջ փակագծերում (Մարտիրոսյան Հ., 1964, էջ 125-128; …; …): Երկրորդական տեղեկությունները և ծանրաբեռնված հղումները տանել տողատակ:
5) Գրականության ցանկը՝ հոդվածի վերջում: Գրել պարբերական/ամսագրերի ամբողջական անունները: Ժողովածուներում հիշել հրատարակչի անունը: Օրինակ՝

Գրականության ցանկ

1. Ավետիսյան Պ. Ոսկու ֆենոմենը հնագույն Հայաստանում, Քալանթարյան Ա. (խմբ.), *Հին Հայաստանի ոսկին*, Երևան, 2007, էջ 41-52:
2. Դեվեջյան Ս., Լոռի Բերդի ուշբրոնզեդարյան մարտակառքը, *Պատմա-բանասիրական հանդես, թիվ* 1, Երևան, 1976, էջ 209-220:
3. Թորոսյան Ռ. ,*Թեղուտի վաղերկրագործական բնակավայրը*, Երևան,1976:

## ՀՀՀ-ի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ *Հայկ Ավետիսյան*
Պատասխանատու քարտուղար՝ *Արսեն Բոբոխյան*

Խմբագրական խորհուրդ՝ *Արամ Սիմոնյան*, *Պավել Ավետիսյան*, *Միհեր Հովհաննիսյան*, *Ռուբեն Բաղալյան*, *Մկրտիչ Զարդարյան*, *Հուսիկ Մելքոնյան*, *Գագիկ Սարգսյան* :

## Հոդվածները ներկայացնել՝

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 7րդ հարկ, 701 սենյակ, Միհեր Հովհաննիսյան (handes@armin.am)

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Չարենցի 15
Արսեն Բոբոխյան (arsenbobokhyan@yahoo.com)